# ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

VEOLIA
ENVIRONNEMENT

# ՄԵՐ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՏՈՒԱՆ ՖՐԵԲՈ՝
ՎԵՈԼԻԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ,
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

**ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԵՑՈՒՑՑ Է ԾԱՌԱՅՈՒՄ ՎԵՈԼԻԱՅԻ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ԱՌՕՐՅԱ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

Որ երկրում էլ որ աշխատում է Վեոլիան, այն ջանում է առաջ քաշել իր սեփական արժեքները, հետևել յուրաքանչյուր երկրում ընդունված և գործող առանձնահատուկ օրենքներին, միջազգային կազմակերպությունների կողմից որդեգրված վարվելակերպի կանոններին և ուղեցույցներին և քաջալերել վերջիններիս ապահովումը:

Աշխարհագրական տարածքից կամ տնտեսական և ֆինանսական իրավիճակից անկախ մեր բիզնեսները պետք է գործեն տվյալ երկրի ազգային տեղական օրենսդրության և միջազգային կազմակերպությունների կողմից տրված առաջարկություններին համապատասխան, մասնավորապես, պահպանելով հիմնական սկզբունքները, քաջալերել շրջակա միջավայրի պահպանությունը, հաշվի առնելով երկրների միջև մշակութային տարբերությունները:

Սույն փաստաթուղթը որպես ուղեցույց է ծառայում աշխարհի այն բոլոր երկրներում, որտեղ Վեոլիան իր բիզնեսներն է ծավալում, Վեոլիայի ընկերությունների կառավարման բոլոր մակարդակներում աշխատող բոլոր աշխատակիցների համար իրենց առօրյա վարվելակերպի դրսևորման համար՝ քանի որ, պրոֆեսիոնալ կերպ վարել բիզնեսը, հաճախորդներին վերաբերվել հարգանքով, կատարել մեր պարտականությունները պարզապես նշանակում է՝ պատշաճ կատարել մեր աշխատանքը:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վեոլիան իր բիզնեսը ծավալում է ջրամատակարարման, աղբահանության և էներգետիկայի ոլորտներում, որոնք գտնվում են զարգացման մարտահրավերների կենտրոնում:

Քանի որ շրջակա միջավայրի հետ ուղղակի կապված ծառայությունների մատուցումը բիզնեսում առանցքային տեղ են զբաղեցնում, Վեոլիան մասնակցում է բնապահպանության բազմապիսի միջոցառումներին, տնտեսական զարգացումներին և ձգտում է ապահովել բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործման և կառավարման շարունակական ընթացքը, պայքարում է բնակլիմայական պայմանների փոփոխությունների երևույթի և աղտոտումների դեմ, պահպանում և զարգացնում է կենդաբազմազանությունը, բարելավում է բնակչության առողջությունն ու բարեկեցության մակարդակը:

Հանդես գալով որպես Ֆրանսիական Բիզնես Գրուպ, որն իր բիզնեսները բազմաթիվ երկրներում է ծավալում, Վեոլիան քաջատեղյակ է իր պատասխանատվություններից և կարևորագույն ոլորտներից, որտեղ անհրաժեշտ է պահպանել ներքոհիշյալ նկարագրված արժեքներն ու վարվելակերպի կանոնները՝ ինչպես իր աշխատակիցների, այնպես էլ մյուս շահագրգիռ կողմերի՝ մասնավորապես իր սպառողների, մատակարարների, և այն երկրների բնակիչների, որտեղ Ընկերությունը ծավալում է իր բիզնեսը:

Գործնական միջավայրում դրսևորվող վարվելակերպը, որը նկարագրված է սույն էթիկայի կանոնների ուղեցույցում, միտված են երաշխավորելու վերջինիս համապատասխանությունը՝

- Վեոլիա ընկերության արժեքներին և վարվելակերպի կանոններին, որոնք հատուկ են Վեոլիայի համար:

- Միջազգային ընդունված ուղեցույցների պահանջներին, ինչպիսիք են Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլոբալ Կոմպակտը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային օրենքը, Բազմաթիվ տարբեր ազգություններով համալրված ձեռնարկությունների համար Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից մշակված ուղեցույցը:

- Բոլոր երկրների տեղական ընդունված օրենքների, որտեղ որ Գրուպը իր բիզնեսներն է ծավալում:

Բարդ և բազմապիսի մշակույթ ունեցող աշխարհում, որն անընդհատ փոփոխությունների է ենթարկվում, սույն ուղեցույցը իր բոլոր աշխատակիցների համար որպես հորում է ծառայում: Այն պետք է աշխատողներին հնարավորություն ընձեռի գործելու իբրև այս արժեքների պահպանման երաշխավորներ, և կատարեն իրենց պարտականությունները իրենց իրավունքների և պարտականությունների լիարժեք իմացությամբ ի դեմս ընկերության և բաժնետերերի:

# ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Վեոլիա ընկերության հիմնական արժեքներն են՝ **պատասխանատվությունը, հավատարմությունը, հարգանքը, նորամուծությունը, սպասողներին արժանորումը** և այնպիսի հիմքի ստեղծումը, որի վրա կառուցվում է կատարողականությունը տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտներում:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝

Վեոլիա ընկերությունը նպատակ ունի կառուցել այնպիսի մի հասարակություն, որը նվիրված է կայուն զարգացման գաղափարին: Հանրային ծառայությունների և շրջակա միջավայրի բնագավառում որպես գլխավոր դերակատար, Գրուպը օր օրի ստանձնում է ընդհանուր շահերից բխող պարտականությունները, մասնավորապես՝

- առաջ քաշել տարածաշրջանների համահունչ զարգացումը
- բարելավել իր ծավալած գործունեության արդյունքում վերջինիս ազդեցությունը իր վրա կրած բնակչության ապրելակերպի պայմանները և պաշտպանել բնությունը, իր հիմնական բիզնեսը, ինչպես նաև,
- ընկերության ներսում զարգացնել հմտությունները և անհատների անվտանգությունը (կանխարգելեր աշխատանքի վայրում դժբախտ պատահարները), բարելավել առողջության համար վնասակար աշխատանքային պայմանները, ապահովել բոլոր աշխատողների և Գրուպի կողմից կառավարվող բոլոր ենթակառուցվածքների անվտանգությունը

Ընկերության գործողությունները հիմնված են ՝՝Կայուն Զարգացման Կանոնադրության՝՝ վրա, որը ձգտում է շարունակական առաջադիմություն ապահովել այս բոլոր կարևորագույն խնդիրների կարգավորման գործում:

## ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՐՈՒՊԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ՝

Վեոլիա ընկերությունում, որն իր բիզնեսի գործունեության միջոցով ծառայում է՝ թե կոլեկտիվ և թե՝ ընդհանուր շահերի ապահովմանը, սույն արժեքը վերաբերում է բոլոր շահագրգիռ կողմերի հետ ունեցած հարաբերություններին: Մասնավորապես, այս արժեքն արտահայտվում է այնպիսի լուծումների մշակման գործընթացով, որը հնարավորություն է ընձեռում մատուցելու կենսական նշանակության ծառայությունները բոլոր սպառողների համար. ինչը Գրուպի կողմից դիտարկվում է սոցիալական ոլորտում որպես իր մեծագույն պատասխանատվությունը:

## ՀԱՐԳԱՆՔ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝

Սույն արժեքը ուղղորդում է Գրուպի բոլոր աշխատողների անհատական վարվերակերպը և արտահայտվում է օրենքների տառի պահպանությամբ և գրուպի ներքին կանոններին համապատասխանության միջոցով, ինչպես մյուսների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցադրելու միջոցով:

## ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝

Հետազոտություններն ու նորամուծությունները գտնվում են Վեոլիա Ընկերության ռազմավորության կենտրոնում՝ նպատակ ունենալով զարգացնել իր սպառողների, շրջակա միջավայրի և հանրությանը մատուցվող ծառայությունների համար երկարակյաց լուծումներ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՍՊԱՌՈՂԸ՝

Ավելի բարձր արդյունավետության մակարդակ և մատուցվող ծառայությունների ավելի բարձր որակ ապահովելու փնտրտուկը իր իմաստով առաջնային են, որտեղ գրուպը շեշտադրում է այս արժեքը: Բացի այդ, Վեոլիան պահպանում է իր գործունեության թափանցիկությունը և էթիկայի կանոնները, որոնք պետք է հնարավորություն ստեղծեն իր սպառողների հետ երկարատև փոխվստահության հարաբերություններ ստեղծել: Ի վերջո, Գրուպը լսում է իր հաճախորդներին և ձգտում է բավարարել իրենց տեխնիկական, տնտեսական, բնապահպանական և սոցիալական ակնկալիքները՝ համապատասխան և նորարական լուծումներ տրամադրելու իր ունակության միջոցով:

# ՎԱՐՔԱԳԾԻ ՄԵՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

**Վեոլիան այնպիսի կանոններ է ընդունել, որոնք վերաբերում են բոլոր աշխատողներին, Ընկերության վարչական տարբեր մակարդակներում իրենց պարտականությունների կատարման ընթացքում:**

## ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Վեոլիան գտնում է, որ օրենքների և կանոնների պահանջների ապահովումը կարևորագույն պահանջ է: Գրուպը պարբերաբար կրթում է իր աշխատակիցներին՝ շեշտադրելով գործող պարտադիր կատարման ենթակա օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջների ապահովումը:

Հանրային և պետական սեկտորներում զբաղված պաշտոնյաների կողմից կոռուպցիոն գործելակերպի կանխարգելում, Վեոլիան պարտավորվում է պայքարել կոռուպցիայի դեպ բոլոր այն երկրներում, որտեղ այն իր բիզնեսն է ծավալում: Ի լրումն բոլոր այն գործողությունների, որոնք անհրաժեշտ է կատարել վերոհիշյալին հասնելու, Վեոլիան վերահաստատում է վարվելակերպի այս կանոնը բոլոր տեսակի բիզնես հարաբերություններում և պարբերաբար միջոցներ է ձեռնարկում բարձրացնելու Գրուպի աշխատողների իրազեկվածության աստիճանը՝ գիտակցելու օրենքներին ենթարկվելու կարևորությունը՝ (տես “Կորպորատիվ քրեական օրենքի ռիսկերի կառավարման ուղեցույց”):

## ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋ Է

”

**Շահերի բախման կանխարգելում՝**

Աշխատողները պետք է կանխարգելեն կամ խուսափեն այնպիսի իրավիճակներից, որոնք առաջացնում են, կամ կարող են առաջացնել փաստացի կամ թվացյալ բախում իրենց անձնական և գրուպի շահերի միջև:

Աշխատողնի անձնական շահը ներառում է ցանկացած օգուտ, որը ստացվում է զուտ աշխատակցի կամ իր ընտանիքի անդամների, ընկերների, հարազատների համար, կամ այն անձանց կամ կազմակերպությունների համար ում հետ աշխատակիցը գործնական հարաբերությունների մեջ է գտնվում և վերջիններիս հետ ընդհանուր շահեր ունի:

Շահերի բախումն առաջանում է այն ժամանակ, երբ անձնական շահը կարող է ազդել աշխատողի կողմից կայացվող որոշման վրա և խանգարող հանգամանք հանդիսանա աշխատողի համար իր աշխատանքային պարտականությունների և պատասխանատվությունների անաչառ կատարման համար: Ուստի, հետևյալ իրավիճակները պահանջում են հատուկ ուշադրություն, օրինակ՝

- աշխատողը իր կամ իր հարազատի համար ստանում է որևէ օգուտ՝ նվեր կամ հրավեր որևէ վայր՝ պետական կառույցի որևէ աշխատակցից, հաճախորդից, մատակարարից, ենթակապալառուից, մրցակիցներից, առևտրային գործընկերներից, կամ մրցակիցներից,
- աշխատողը ուղղակի կամ անուղղակի եղանակով բաժնետոմսեր է տնօրինում, կորպորատիվ գրասենյակի կամ որևէ ընկերությունում կամ կազմակերպությունում ֆինանսական հետաքրքրություն ունի, որի հետ Գրուպը միաժամանակ բիզնես հարաբերություններ ունի կամ իրեն մրցակից է համարում, կամ
- աշխատողը ներգրավված է այնպիսի արտաքին գործունեության մեջ, այնպիսի ընկերության կամ կազմակերպության հետ, որի հետ Գրուպը միաժամանակ գործընկեր է հանդիսանում:

Եթե աշխատողը վերոհիշյալ կետերի շուրջ հարցեր ունի, ապա նա պետք է խորհրդակցի իր անմիջական վերահսկողի հետ, որը պետք է համապատասխան որոշում կայացնի խուսափելու նման իրավիճակի առաջացումից և պաշտպանելու Գրուպի շահերը:

**Էթիկայի կանոնների պահպանում հաշվապահական հաշվառման և ֆինանսաների ոլորտում՝**

Վեոլիան գտնում է, որ խիստ կարևոր է, որ իր աշխատողները պահպանեն էթիկայի կանոնները ֆինանսական գործառույթներ իրականացնելիս, մասնավորապես, երբ կիրառում են սեփական փորձը, կայացնում են որոշումներ և կատարում են իրենց առջև դրված առաջադրանքները: Սա կարևոր է կանխարգելելու ոչ միայն քրեորեն պատժելի հանցանքների ռիսկերը, այլ պահպանել Վեոլիայի գործընկերների վստահությունը իրենց գործընկերոջ հանդեպ, որն անփոխարինելի է Գրուպի երկարաժամկետ հաջողության համար:

**Գաղտնապահություն՝**

Գրուպի ներսում, ինչպես նաև պայմանագրերի իրականացման ընթացքում, Վեոլիան փորձում է ապահովել իր բիզնեսների և գործունեությունների հետ կապված բոլոր տվյալների և տեղեկատվության գաղտնիությունը, մտավոր և արդյունաբերական սեփականության սեփականություն հանդիսացող իրավունքները և առևտրային գաղտնիքները:

**Անվտանգություն՝**

Անհատների և ակտիվների անվտանգությունը Վեոլիայի գերակա խնդիրն է: Ամբողջ աշխարհում Վեոլիան պարտավորված է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն են տալիս պաշտպանել իր աշխատողներին իրենց պարտականությունների կատարման ընթացքում, միաժամանակ միջոցներ ձեռնարկել պաշտպանելու իր տարածքները, գույքը և ոչնյութական ակտիվները. Նմանատիպ, Վեոլիան հատուկ ուշադրություն է դարձնում կանխելու իր համբավին և իմիջին հասցվող որևէ վնաս:
Մշակվել է ներքին անվտանգությանը վերաբերող վարվելակերպի կանոններ, որը սահմանում է անվտանգությանը վերաբերող հատուկ պարտավորություններն ու գործողությունների շրջանակը:

# ՄԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Գրուպի Բիզնես միավորները/ընկերությունները ներկայացնում են Վեոլիան, ուստի, նրանք ակտիվ ներգրավված են հարգելու արժեքները և սույն ուղեցույցում նկարագրված վարվելակերպի կանոնների ապահովման գործում, ի դեմս բոլոր շահագրգիռ կողմերի (աշխատողներ, սպառողներ և ծառայությունները ստացողներ, շահագործվող կայանների մոտակայքում ապրող բնակիչներ, տեղական կառավարման մարմիններ և ոչ-կառավարական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, սպառողների իրավունքների և շրջական միջավայրի պաշտպանողներ և այլն):**

## ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

**Կանանց և տղամարդկանց կողմից սոցիալական, բնապահպանական և այլ գործառնական ոլորտներում գերազանց կատարողականի ցուցադրում.**

Ամեն օր մեր աշխատողները ձգտում են հաղթահարել հասարակության առջև ծառացած բնապահպանական և քաղաքաշինական խնդիրների հետ կապված մարտահրավերները, և իրենց ներդրումն ունենալ մեր Գրուպի հաջողության մեջ:
Հետևաբար, Վեոլիան ջանում է այնպիսի հնարավորություններ ընձեռել իր աշխատակիցներին, որպեսզի նրանց կարողանան կայանալ թե՛ որպես մասնագետներ, և թե՛ շարունակեն զարգացնել իրենց հմտությունները՝ մշակելով արդյունավետ և հավակնոտ կորպորատիվ մոդել:

Համապատասխանաբար, Վեոլիան մեծ կարևորություն է տալիս սոցիալական նախաձեռնություններին, հիմնվելով չորս սկզբունքների վրա՝

- հավասարություն
- համերաշխություն
- աշխատողների աշխատանքի տեղավորման հնարավորությունների զարգացում
- կանխարգելել առողջության և անվտանգության հետ կապված ռիսկերը

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

## Երաշխավորել հավասարությունը աշխատավայրում

Սա նշանակում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն են ստեղծում գնահատելու յուրաքանչյուր աշխատողի մասնակցության չափը ընկերության ընդհանուր հաջողության մեջ, ուստի հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր անհատի համար բարելավելու իր կատարողականությունը:

Քանի որ Վեոլիան համոզված է, որ իր աշխատողների բազմապիսությունը նշանակալի ակտիվ է ներկայացնում ընկերության բիզնեսի հաջողության համար, այն ձգտում է գնահատել յուրաքանչյուր աշխատողի ջանքերն ու վաստակը, և երաշխավորել, որ աշխատողները ամբողջությամբ կիսում են ընկերության հետ իր ծրագրերն ու արժեքները, այնպես, որ աշխատողները զգան, որ ընկերության հաջողակ կատարողականության մեջ ունեն իրենց կատարած աշխատանքի բաժինը:

Ինտեգրված, հարգված լինելու և աշխատավայրում հավասար պայմաններ ունենալու զգացմունքը խիստ կարևոր է աշխատողների ամենօրյա պարտակա-նությունների կատարման համար, որն իր հերթին նշանակում է բազմապիսության, խտրականությունների և տարբեր հնարավոր տեսակի հետապնդումների բացառում:

## Համերաշխության ջատագով

Ելնելով իրենց աշխատանքի բնույթից, Վեոլիա ընկերության աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են տղամարդկանց և կանանց կյանքի պայմանների բարելավման գործընթացում այն երկրներում, որտեղ Գրուպը ծավալում է իր գործունեությունը:

Բնականաբար, համերաշխությունը այս պարագայում Վեոլիայի կողմից դիտարկվում է որպես առաջնային ուշադրություն պահանջող պայման ամբողջ աշխարհում:

Առաջադրելով ղեկավարություն – բանվորական անձնակազմ երկխոսությունը, ամենախոցելի սեկտորներում ներգրավված աշխատողներին աջակցություն ցուցաբերելը, յուրաքանչյուր աշխատակցի անձնապես կայացման գործին ուշադրություն դարձնելը՝ սրանք իրենցից ներկայացնում են մարդկային ռեսուրսների կառավարման կարևոր բաղադրիչներ:

## Աշխատողների աշխատանքի տեղավորման հնարավորությունների մեծացում

Սա նշանակում է աջակցել աշխատողների հմտությունների զարգացման միտումներին, ոգևորել աշխատողներին փոխանակել իրենց կուտակած փորձը, հաղթահարել մասնագիտական մարտա-հրավերներն ու առաջ շարժվել դեպի նորամուծությունները:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

# ՀԱՄՈԶՎԱԾ Է, ՈՐ ԻՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲԱԶՄԱՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱԿՏԻՎ Է ԻՐ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ծառայություններ մատուցող բիզնեսում, աշխատողների գիտելիքներն արժեքավոր առաջնային ռեսուրս են: Վեոլիա ընկերությունը նպատակ ունի շարունակական բարելավել իր մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացը՝ ակտիվ մասնագիտական վերապատրաստման դասընթացների և կարիերայի զարգացման քաղաքականության միջոցով:

**Ուշադիր լինել առողջության և անվտանգության հետ կապված ռիսկերի կանխարգելման գործում**

Սա նշանակում է ամենօրյա աշխատանք տանել բարելավելու ռիսկերի կանխման քաղաքականության զարգացման ուղղությամբ, սերտ համագործակցելով աշխատողների հետ, ովքեր քաջատեղյակ են իրենք պարտականություններից:



Ողջ աշխարհով իր պարտականությունների կատարման ընթացքում, Վեոլիան միջոցներ է ձեռնարկում ապահովելու իր աշխատակիցների անվտանգությունը:

Վեոլիան ձգտում է շարունակաբար բարելավել իր գործունեությունը ի պատասխան մեր բիզնեսներում շարունակական բնույթ ունեցող փոփոխությունների:

Վեոլիան քաջատեղյակ է, որ իր աշխատողների փորձառությունը առանցքային ակտիվ է հանդիսանում ընկերության համար և այդ առումով քաջալերում է փորձի փոխանակումը ընկերության ներսում և իր աշխատողներին առաջարկում է ոգեշնչող առաջխաղացումներ իրենց աշխատանքային կարիերայի ընթացքում: Համաշխարհային լավագույն փորձը առողջապահության, անվտանգության, աշխատողների իրազեկության և համաշխարհային հավասարակշռության վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է ընկերության բոլոր աշխատակիցներին:

Մեր պարտավորություն-յունները, որոնք համապատասխանում են Միջազգային Աշխատանքային Գրասենյակի կողմից մշակված առողջության և անվտանգության ուղեցույցին, հիմնված է աշխատողների ամենօրյա աշխատանքային պայմանների բարելավման նպատակով արդյունավետ լուծումներ գտնելու մեր հնարավորությունների վրա:

Այս կապակցությամբ և պետական մարմինների /իշխանությունների հետ համագործակցելու շնորհիվ, ճանապարհորդության ընթացքում անվտանգության իր ներքին ընթացակարգի միջոցով, Վեոլիան նմանականացնում է ռիսկային համարվող տարածքներն ու գործողությունները՝ նպատակ ունենալով քարտեզագրել կատարվող գործողությունները և ներառել անհրաժեշտության դեպքում համապատասխան կանխարգելիչ միջոցառումները:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

## ՍՊԱՌՈՂՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐ՝

Հաճախորդների հետ առևտրային հարաբերություններում Վեոլիան առաջին հերթին իր ուշադրությունն է սևեռում իր իրավական և պայմանագրային պարտավորությունների հստակ կատարմանը:

Իր իրավական պարտավորություններից բացի, Գրուպը պարտավորություն է ստանձնել ամբողջությամբ մշակել և իրականացնել այն լուծումները, որոնք բավարարում են հաճախորդների ակնկալիքները, թե՛ հանրային, և թե՛ պետական սեկտորում, ինչպես նաև այլ ծառայություններ ստացողների, որոնք վստահություն ունեն Վեոլիայի նկատմամբ:

Իր հաճախորդների և համապատասխան կազմակերպությունների հետ միասին Վեոլիան այնպիսի ուղիներ է փնտրում, որոնք հնարավորություն կընձեռեն բոլոր կենսական նշանակություն ունեցող ծառայություններից օգտվելու հնարավորությունները ընդլայնումը:

Ակտիվների ամբողջականությունը պահպանությունն ու պաշտպանությունը երաշխավորում է Գրուպի կողմից մատուցվող ծառայությունների որակն ու կատարողականությունը:

## ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Համապատասխանելով գործող օրենսդրությանը, Վեոլիան սահմանում է իր մատակարարներին և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրելու օբյեկտիվ չափորոշիչներ:

Սույն չափորոշիչները հիմնվում են մատակարարների կատարողականության ցուցանիշների վրա, ինչպես նաև դիտարկումների արդյունքների հիման վրա՝ այսինքն՝ ինչպես են վերջիններս պահպանում Գրուպի կողմից ընդունված էթիկայի և կայուն զարգացման կանոնները:

Ֆունդամենտալ արժեքները շեշտադրված են մատակարարների հետ փոխհարաբերությունները կարգավորող կանոնադրության մեջ, որը կառավարում է մատակարարների ընտրության գործընթացը, բազմաթիվ հոդվածներից բացի ներառելով պարտադրված աշխատուժի կամ երեխաների շահագործման արգելանքը:

Մատակարարների, ծառայություններ մատուցողների և հաճախորդների հետ ձևավորվող հարաբերություններում մասնավոր և պետական պաշտոնյաների կորուպցիայի դեպ պայքարը Վեոլիայի ուշադրության կենտրոնում է:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

Մասնավորապես, Վեոլիան պնդում է, որ իր աշխատողները կարող են իրենք անունով հրավերներ կամ նվերներ ընդունել բացառիկ դեպքերում, որոնք կարող լինել միայն ոչ-դրամային տեսքով և ունենալ փոքր արժեք:
Կասկած ունենալու դեպքում, Վեոլիան առաջարկում է աշխատողներին դիմել իրենց անմիջական ղեկավարին/ վերահսկողին:

Ի վերջո, Վեոլիան համապատասխանեցնում է իր գործունեությունը ենթակապալառուների վարձումը կամ արտաքին ընկերությունների հետ համագործակցությունը կարգավորող իրավական ակտերին, հասկապես եթե խնդիրը վերաբերում է իր անձնակազմի առողջապահությանն ու անվտանգությանը:

Այն դեպքերում, երբ Վեոլիան օգտագործում է գործակալներին կամ միջնորդներին, վերջինս համապատասխանեցնում է իր գործառույթը Գրուպի հատուկ ընթացակարգի պահանջներին՝ արժանահավատությունը երաշխավորելու նպատակով:

Սույն ընթացակարգը նման ծառայություններ մատուցողներին ընտրելու մեխանիզմներ է առաջարկում, վերահսկում է վերջիններիս կողմից կատարվող պարտականությունների որակն ու սահմանում է փոխհատուցման կարգը ստանդարտ պայմանագրի միջոցով, երաշխավորում է այն, որ ծառայությունները մատուցվեն՝ պահպանելով խիստ սահմանված ներքին կանոնները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

### Կորպորատիվ ֆինանսական աջակցություն

Դեպի համերաշխություն ուղղորդված Վեոլիայի կորպորատիվ ֆինանսական աջակցությունը սկզբունքորեն կենտրոնացված է Վեոլիա Հիմնադրամում և կոորդինացվում է վերջինիս կողմից:

Այն աջակցում է հանրային շահերի պաշտպանությանը միտված գործառույթների իրականացմանը, որոնք ոչ-առևտրային շահեր են հետապնդում, և առաջ է քաշում այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են սոցիալական մեկուսացման դեմ, նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը՝ երեք հիմնաման ուղղություններով.

- մարդասիրական ծրագրերի իրականացում, արտակարգ իրավիճակներում գտնվող մարդկանց օգնության ցուցաբերում, խմելու մաքուր ջուր ստանալու և կեղտաջրերի հեռացման հնարավորությունները մարդկանց հասանելի դարձնելու նախաձեռնությունների իրականացում. Էներգիայի մատակարարման և աղբահանության ծառայությունների կառավարում,
- սոցիալական փոխկապակցվածության քաջալերում, աշխատանքային նախաձեռնություններին աջակցությունը,
- շրջակա միջավայրի և կենդաբազմազանության պաշտպանություն:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

## Գործնական մասնակցություն

Համատեղ գործնական մասնակցությունը ցուցադրում է Գրուպի տնտեսական, սոցիալական և բնապահպանական պարտավորվածությունը հասարակության նկատմամբ: Դրանք միջոցներ են առաջարկում համախմբելու հարաբերությունները բոլոր շահագրգիռ կողմերի հետ, հիմքում դնելով ֆունդամենտալ արժեքների նկատմամբ ունեցած հարգանքը և տարածքների զարգացումը սատարող տեսլականը:

Վեոլիայի պարտավորությունները համատեղ գործնական մասնակցության նկատմամբ նույնպես ֆինանսական աջակցության ձև են ստանում, որոնք ուսումնասիրվում և հավանություն են ստանում հատուկ հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով աշխարհում տեղ գտած լավագույն փորձի սկզբունքները:

Վեոլիայի գործողություններն էլ ավելի են առաջ քաշվում տարբեր երկրներում գործող կազմակերպությունների կողմից առաջադրված նախաձեռնությունների միջոցով:

## Շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարում, ռիսկերի կանխարգելում և կրթություն

Շրջակա միջավայրի կառավարման համակարգի ներդրման (ՇՄԿՀ) շնորհիվ, Վեոլիան գործածում է այնպիսի գործիք, որի միջոցով իր կամ իր սպառողների գործունեության արդյունքում առաջացող ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազում է, կանխարգելվում կամ կրճատվում է արտադրական, առողջապահական և բնապահպանական գործոնների հետ կապված ռիսկերը տեղերում:

Այլ կերպ ասած, աշխատողների և հաճախորդներին կրթելը, իրենց իրազեկվածության մակարդակի բարձրացումը կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, ինչպես նաև առողջապահությունը գերակա խնդիրներ են Վեոլիայի համար:
Այս նպատակով Վեոլիան կրթության և իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով հատուկ ծրագիր է մշակում:

## Երկխոսություն շահագրգիռ կողմերի հետ

Ակտիվ մասնակցում է այնպիսի հասարակության կառուցման գործում, որն ամբողջությամբ նվիրված է կայուն զարգացման գաղափարին, և Վեոլիայից պահանջում է երկխոսության մեջ մտնել իր բազմապիսի շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես, բնակչության այն հատվածի հետ, ովքեր բնակվում են շահագործվող կայանների մոտակայքում, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության մյուս ներկայացուցիչների հետ:
Համապատասխանաբար, Վեոլիան պատրաստ է ձեռնամուխ լինել նման երկխոսությանը մասնակցելուն թե՛ տեղական, և թե՛ միջազգային մակարդակներում:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

## ԲԱԺՆԵՏԵՐԵՐՆ ՈՒ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԸ

**Կորպորատիվ կառավարում, ֆինանսական էթիկա և ԱՄՆ, Ֆրանսիա բորսաների պահանջներին և կանոնների համապատասխանեցում.**

Որպես բորսաներում գրանցված ընկերություն, Վեոլիան որդեգրել է Ֆրանսիական ″AFEP/MEDEF Կորպորատիվ կառավարման օրենսգիրքը″, որը սահմանում է Տնօրենների Խորհրդի կազմն ու կառավարման սկզբունքները, իր հանձնաժողովները (ներառյալ աուդիտի և հաշվապահական հաշվառման հանձնաժողովները), ղեկավար անձնակազմի, կորպորատիվ մակարդակում գտնվող ծառայողների և Տնօրենների Խորհրդի անդամների վարձատրություններն ու հատուցումները, ինչպես նաև տեղեկատվության այն ծավալը, որը պետք է տրամադրվի բաժնետերերին և տվյալ տարածքում առկա շուկաներին:

Ի լրումն վերոհիշյալի, Գրուպը որդեգրել է ֆինանսական ոլորտում աշխատող անձնակազմի համար նախատեսված էթիկայի կանոններ, որը կանոնակարգում է այն ղեկավարների վարվելակերպը, ովքեր պատասխանատու են ֆինանսական և հաշվապահական տեղեկատվությունը վավերացնելու, ուստի նրանք ունեն արժանահավատության ապահովման հատուկ պարտավորություն, ներքին փորձաքննություն անցկացնելու, ներքին վերահսկողություն իրականացնելու, և հատուկ վերահսկողություն իրականացնելու այն դաշտում, որտեղ ձևավորվում են ներդրողների հետ հարաբերությունները:

Վեոլիան նույնպես որդեգրել է վարվելակերպի կանոններ, որոնք վերաբերում են կատարվող գործարքների անվտանգությանը, որը նախատեսված է կանխարգելելու արժեթղթերի բորսայում կիրառվող օրենքների խախտումների ռիսկերը՝ կապված Ընկերության բաժնետոմսերի ապօրինի առք-ու-վաճառքով զբաղվող անձերի հետ գործարքի մեջ մտնելու ռիսկերի հետ, կամ պարտականությունների թերի կատարման հետ: Սույն կանոնակարգը որպես հիշեցում է ծառայում ղեկավարների և աշխատողների համար առ այն, որ վերջիններս պարտավորություն են ստանձնել պահպանելու իրենց հասու տեղեկատվության գաղտնիությունը, և իրենք պարտավոր են այն պահպանել այնքան ժամանակ, մինչև որ տեղեկատվությունը բացահայտ չհրապարակվի և հասանելի չդառնա արտաքին շուկայի համար:

Վեոլիան մեծ ուշադրություն է սևեռում վերոհիշյալ վարվելականոնների պահանջներին ղեկավար անձնակազմի և մյուս աշխատողների համապատասխանելիության վրա, մասնավորապես նրանց, ովքեր թեկուզ և ժամանակավոր տիրապետում են հատուկ տեղեկատվությանը:

Վեոլիան իր գործունեությունը համապատասխանեցնում է Ֆրանսիայի և ԱՄՆ արժեթղթերի բորսաների կանոններին, այս իմաստով, որ Վեոլիան պաշտոնական վարվելակերպի կանոններ են որդեգրել, որոնք կիրառելի են իր բոլոր Ֆրանսիայի և օտարերկրյա իրավաբանների համար, թե՛ կազմակերպության ներսում աշխատող, և թե՛ վարձված իրավախորհրդատուները:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

**Հարաբերություններ ներդրողների հետ**

Վեոլիան երաշխավորում է իր հաշվապահական հաշվառման համակարգի և ֆինանսական տվյալների անհրաժեշտ ճշգրտությունը: Որպես ԱՄՆ արժեթղթերի բորսայում գրանցված ընկերություն, Վեոլիան ենթարկվում է նաև ԱՄՆ օրենքին, որը պահանջում է ձևավորել ընկերությունների ներսում ներքին վերահսկողության մեխանիզմները գնահատող միավոր, որը խելամիտ սահմաններում կերաշխավորի առ այն, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ազնիվորեն և ճշգրիտ, որ փաստացի կատարված գործարքները պատշաճ կերպ վավերացվել են, որ բոլոր հնարավոր քայլերը ձեռնարկվել են բացառելու խարդախ վարվելակերպն ու անթույլատրելի գործարքների կատարումը, ուստի խուսաթել Գրուպի համախմբված ֆինանսական հաշվետվություններում կեղծ կամ սխալ գործարքների ներկայացումից:

Վեոլիան մեծ տեղ է տալիս և ուշադրություն է դարձնում ֆինանսական հաղորդակցությանը: Այն ձևավորել է Բացահայտման Կոմիտեն, որի պարտականությունների շրջանակում ներառված է՝ իրականացնել և պահպանել այնպիսի ընթացակարգերը, որոնք նախատեսված են վերահսկելու և երաշխավորելու տարեկան հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության հուսալիությունը (օր՝ տարեկան հաշվետվությունները, գրանցման փաստաթղթերը, պարզեցված տարեկան հաշվետվությունները, կայուն զարգացման հաշվետվությունները, և Ձև20-Ֆ-ը, որոնք կազմվում են ԱՄՆ արժեթղթերի բորսայի համար):

Ավելի ընդարձակվելով, ֆինանսական հաղորդակցությունը հատուկ վերահսկողության ենթակա և ընթացակարգերի պահպանական թեմա է: Այս ոլորտը կառավարվում է ամեն օր Ֆինանսական հաղորդակցման ստորաբաժանման կողմից, որի գործողությունները համակարգվում և հաստատվում են գործադիր ղեկավարների և գործընթացում ներառված Վեոլիայի բազմաթիվ տարբեր ֆունկցիոնալ ստորաբաժանումների կողմից:

©VEOLIA -08/2013 - ETHICS GUIDE

## ՄՐՑԱԿԻՑՆԵՐ

Շատ երկրներ, որտեղ Գրուպն իր գործունեությունն է ծավալում, ընդունել են տնտեսական մրցակցության մասին օրենքը, որը պահանջում է հիմնական սկզբունքների պահպանումը, որն իր հերթին նպաստում է ազատ և ազնիվ մրցակցության ուժեղացմանը:

Վեոլիան պահանջում է, որ իր բոլոր աշխատակիցները միշտ ապահովեն սույն օրենքների պահանջների կատարումը, որոնք նկարագրված են ՝՝Մրցակցության օրենքին համապատասխանելու ուղեցույց՞՞-ում:

Վեոլիան նաև ոգևորում է բոլոր աշխատակիցներին, իրենց աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում նմանականացնել այն ոլորտները, որոնք կարող են բարդություններ առաջացնել Մրցակցության օրենքին համապատաս-խանելու տեսանկյունից, և նման դեպքերում խորհրդակցել իրենց անմիջական վերահսկողների և Ընկերության իրավաբանների հետ:

## ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իր բիզնեսի հետ կապված, թափանցիկ կերպ, Վեոլիան իր մասնակցությունն ունի օրենքների մշակման և պետական վարվող քաղաքականությունում փոփոխություններ կատարելու գործում:

Սեփական շահերի առաջքաշումն իրականացվում է թե՛ պետական իշխանությունների, և թե՛ համայնքային տեղական մակարդակում կառավարող մարմինների առջև (օրենսդիր հանձնաժողովներ, գործադիր մարմիններ և կարգավորող մարմիններ) այն երկրներում, որտեղ Գրուպն իր գործունեությունն է ծավալում, Եվրոմիության ինստիտուտներում և միջազգային կազմակերպություններում:

Իր ինստիտուցիոնալ գործողությունների և միջոցառումների շնորհիվ, Գրուպն իրազեկում է բոլոր շահագրգիռ մարմիններին իր բիզնեսին վերաբերող օրենքների և պետական քաղաքականության փոփոխությունների ազդեցությունների և հետևանքների մասին:

# ՄԵՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**Իր արժեքները պահպանելու և կանոններին հետևելու նպատակով Գրուպը ձևավորել է այդ նպատակով ստեղծված կառուցվածքն ու ներքին ընթացակարգերը:**

**Սույն կառուցվածքն ու ներքին ընթացակարգերը արտացոլում են տարբեր ոլորտները, որոնք ներառված են սույն ուղեցույցում, և ենթակա են ներքին տեղեկատվության և իրազեկության աստիճանի բարձրացման, ինչպես նաև օրենսդրական և ֆինանսական գործառույթների նկատմամբ վերահսկողության կանոնների ապահովումը:**

**Այս կազմակերպությունը և ներքին ընթացակարգերը ձևավորվել են հետևյալի շուրջ՝**

**՞էթիկայի Թղթակիցների՞ ցանց**

՞էթիկայի Թղթակիցների՞ ցանցը (տարբեր երկրներում) ներգրավված է տեղերում Գրուպի էթիկայի քաղաքականության իրականացման գործում:

**Էթիկայի Հանձնաժողով**

2004թ-ին ձևավորվել է ՞էթիկայի Հանձնաժողովը՞, որի կազմում ներգրավված են անկախ անդամներ, ովքեր ղեկավարվում են Գործադիր Կոմիտեի կողմից սահմանված ներքին կանոնադրության և ուղեցույցերի պահանջներով էթիկայի թեմային վերաբերող ցանկացած խնդրի շուրջ:

Հանձնաժողովը բաղկացած է երեքից հինգ անդամներից, որոնք ընտրված են գործադիր կոմիտեի կողմից: Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել խիստ անկախության և գաղտնապահության սկզբունքները: Էթիկայի Հանձնաժողովի օրակարգում ներառված է առաջարկությունների ներկայացում Վեոլիայի հիմնական արժեքների վերաբերյալ:

## Գնահատման հանձնաժողով՝ անվանվում է ՛՛քննադատող ընկերներ՛՛

Հանձնաժողովը բաղկացած է բարձրաստիճան մասնակիցներից, որոնք ներկայացնում են ասոցիացիաները, ինստիտուտները և ակադեմիական ոլորտները, որի նախագան Ժան-Միշել Սեվերինոն է: Նրանք վճռական են Վեոլիային ներկալացնել իրենց ապագայի տեսլականը, փորձառությունն ու կառուցողական քննադատումը:

Պաշտոնական դիրքի չարաշահման դեպքերի մասին հայտնելու իրավունքը Գրուպի շրջանակներում գործածվում է այն երկրի կանոնների համաձայն, որտեղ ապրում և աշխատում է տվյալ անձնակազմը, ցանկացած աշխատակից, որը սույն Ուղեցույցով սահմանված վարքականոնների խախտման դեպք է արձանագրել, կարող է հայտնել այդ մասին էթիկայի հանձնաժողովին՝ (ընկերության ներքին և լիազորված մարմինն է, որը պատասխանատու է նման խախտումների արձանագրման դեպքում վերջիններիս ուսումնասիրելու, համակարգելու և կարծիք հայտնելու համար) գրության, էլ.գրության կամ հեռախոսազանգի միջոցով:

Սույն ընթացակարգը կարող է նաև օգտագործվել այն դեպքում, երբ աշխատակցի կարծիքով խնդիրը իր անմիջական ղեկավարներին հայտնելով կամ ավելորդ բարդություններ կառաջանան, կամ էլ անմիջական ղեկավարները բավարարող սպառիչ պատասխան և խնդրի լուծում չեն առաջարկի:

## Գրուպի էթիկայի քաղաքականության իրագործումը տեղերում

Այս առումով, Գրուպը պարտավորություն է ստանձնել քայլեր ձեռնարկել ապահովելու աշխատողի և իր հայտնած խարդար կամ սխալ գործողությունների մասին տեղեկատվության լիարժեք գաղտնիությունը:

Վեոլիան նույնպես պարտավորվել է գործել այնպես, որ սույն ընթացակարգի կիրառման հետևանքով որևէ աշխատակցի վրա հետագայում չգործադրվեն ճնշումներ, ոտնահարվեն իրավունքները կամ իրենց նկատմամբ խտրականություն դրսևորվի:

Վեոլիա Շրջակա Միջավայր
38, Կլեբերի պողոտա
75799 Փարիզ, ցեդեքս 16
ՖՐԱՆՍԻԱ

www.veolia.com

VEOLIA
ENVIRONNEMENT

©VEOLIA -08/2013 - GRAPHIC DESIGN: IKONEO - PHOTOS: PHOTOTHEQUE VEOLIA